ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 ապրիլի 2026 թվականի թիվ 29-Ա

ք. Երևան

«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մարտի 02-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթների շրջանակում 2026 թվականի փետրվարի 26-ին և 27-ին իրականացրել է «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի 2026 թվականի փետրվարի 24-ի և 25-ի ձայնագրությունների մշտադիտարկում:

Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթների պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ:

Արդյունքում 2026 թվականի մարտի 02-ին կազմվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ նաև՝ Արձանագրություն):

Ըստ Արձանագրության՝ լրատվական հաղորդումներում (24.02.2026թ.-ին՝ 3 լրատվական հաղորդում, 25.02.2026թ.-ին՝ 9 լրատվական հաղորդում) նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը: Մասնավորապես՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակարգող, խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի հարցազրույցի լուսաբանումը լրատվական հաղորդման ժամանակ կազմել է հաղորդման եթերաժամի

24.02.2026թ.

- 44,59% (ժամը 21:02:51-21:07:23, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 21:01:28–21:11:38, 10ր 10վ,
- 45,03% (ժամը 22:03:19-22:07:51, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 22:01:29–22:11:33, 10ր 4վ,
- 41,97% (ժամը 23:02:59-23:07:31, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 23:01:08–23:11:56, 10ր 48վ,

25.02.2026թ.

- 42,23% (ժամը 00:05:30-00:10:02, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 00:03:39–00:14:23, 10ր 44վ,
- 43,59% (ժամը 01:02:34–01:07:06, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 01:01:13–01:11:37, 10ր 24վ,
- 43,59% (ժամը 08:02:40–08:07:12, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 08:01:20–08:11:44, 10ր 24վ,
- 42,1% (ժամը 09:02:48–09:07:20, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 09:01:27–09:12:13, 10ր 46վ,

- 42% (ժամը 10:02:29–10:07:01, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 10:01:08–10:11:55, 10ր 47վ,
- 38,36% (ժամը 11:04:20–11:08:52, 4ր 32վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 11:01:12–11:13:01, 11ր 49վ,
- 42,76% (ժամը 21:01:17–21:04:32, 3ր 15վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 21:01:11–21:08:47, 7ր 36վ,
- 36,6% (ժամը 22:01:23–22:04:37, 3ր 14վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 22:01:17–22:10:07, 8ր 50վ,
- 36,6% (ժամը 23:01:18–23:04:32, 3ր 14վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 23:01:12–23:10:02, 8ր 50վ:

Վերոնշյալը պարունակում է Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի խախտման հատկանիշներ:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 թվականի մարտի 02-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 1 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2026 թվականի մարտի 02-ի թիվ Ե/04/04.1/167-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հեռարձակողը նշված գրության և վարչական վարույթի վերաբերյալ 17.03.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել բացատրություններ (դիրքորոշում), որում նշել է, որ

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը, իսկ գրաքննությունն արգելվում է: Հեռուստաընկերության նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ փաստաթղթով լրատվական հաղորդումների մասով արդեն իսկ ամրագրված է, որ նախատեսվում է այնպիսի ձևափաչ, որի շրջանակներում ներկայացվելու են օրվա առավել հնչեղ սոցիալ-հասարակական և մշակութային իրադարձությունները:

2. Մեջբերել է Օրենքի 8-րդ հոդվածը, որի համատեքստում էլ նշել է, որ միայն այն հանգամանքը, որ խնդրո առարկա հարցազրույցի հյուրը եղել է Նարեկ Կարապետյանը, ինքնին բավարար չէ այդ լուսաբանումը դիտարկելու որպես «նույն թեմայի վերաբերյալ լուսաբանում», քանի որ օրենսդրի սահմանած՝ հաղորդման եթերաժամի 25 տոկոսը գերազանցելու արգելքի պահանջը վերաբերում է նույն թեմային, այլ ոչ թե «նույն հյուրին»:

3. Մշտադիտարկման արդյունքում արձանագրված ենթադրյալ իրավախախտման դեպքերը Արձանագրությամբ թվարկվում են 24.02.2026թ.՝ 3, իսկ 25.02.2026թ.՝ 9 անգամ, սակայն փաստական առումով չի կարող խոսք գնալ 12 (9+3) ինքնուրույն ենթադրյալ իրավախախտման մասին: Ըստ էության, մշտադիտարկողի կողմից առանձնացված տեսանյութերից 9-ը նույնական բովանդակությամբ նույն թեմայի կրկնությունն են, իսկ մնացյալ 3-ը իրենց հերթին միմյանց են նույնական: Տվյալ դեպքում, առկա չեն 12 առանձին, ինքնուրույն փաստական կազմեր, այլ ընդամենը 2՝ բովանդակային առումով տարբեր տեսանյութեր:

4. Օրենքի 10–րդ հոդվածի 7-րդ մասի դրույթով օրենսդրի հետապնդած նպատակն ամբողջովին պահպանվում է, երբ միևնույն անձը խոսում է միմյանցից էականորեն տարբեր թեմաների մասին: Այդ տրամաբանության մեջ կարևոր է թեմաների բազմազանությունը, ոչ թե այն, թե հաղորդման ընթացքում քանի անգամ է երևում նույն անձը, և եթե օրենսդրի նպատակը լիներ սահմանափակել նույն անձի մասնակցությունը, նորմում կօգտագործվեին համապատասխան ձևակերպումներ, օրինակ՝ «նույն անձի մասնակցությամբ լուսաբանման տևողության սահմանափակում կամ համանման տերմինաբանություն»:

5. Մշտադիտարկման արձանագրության և Հանձնաժողովի ծանուցման մեջ առկա չէ մատնանշում, թե «նույն թեմայի վերաբերյալ» լուսաբանման ենթադրյալ իրավախախտմամբ որ թեման է վերագրվում Հեռարձակողին որպես նույն թեմատիկ կենտրոնացմամբ թեմա:

6. Հաղորդման հյուրը իր հարցազրույցի ընթացքում առանձին հատվածներում անդրադարձել է մի շարք թեմաների՝ ՀՀ աղքատության մակարդակ, ՀՀ ջրի պաշարների մասին, ՀՀ կենսաթոշակների թվի և չափի, արտաքին անվտանգային թեմաների, քաղաքական իշխանությունների 2021թ. նախընտրական խոստումների և այլն, որոնցից որևիցե մեկի լուսաբանումը առանձին վերցրած որևէ դեպքում չի կարող գերազանցել հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

7. Պնդում է, որ եթե խոսքի ազատության իրավունքի սահմանափակումը կիրառվեր նույն անձի բոլոր ելույթների վրա՝ առանց գնահատելու բովանդակությունը, դա կլիներ անհամաչափ սահմանափակում խոսքի ազատության նկատմամբ, ինչը հակասում է համաչափության սկզբունքին, հատկապես քաղաքական կամ ընդդիմադիր գործիչների հրապարակային խոսքի դեպքում: Հանրային կարևորություն ունեցող մեկ խնդրի շուրջ զարգացումները տարբեր թողարկումներում ներկայացնելը դեռևս չի նշանակում, որ Հեռարձակողը հետապնդել է որևէ անձի կամ քաղաքական ուժի համար հատուկ տեղեկատվական ներկայություն ապահովելու նպատակ:

8. Մեջբերել է Օրենքի 42-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթները, և այս առումով հայտնել, որ տվյալ գործով գնահատման առարկա պետք է դառնան ոչ միայն եթերաժամի թվաբանական հարաբերակցությունը, այլև բովանդակային միջավայրը, թեմայի հանրային նշանակությունը, հաղորդումների տեղեկատվական նպատակը և հնարավոր բացասական հետևանքների առկայությունը:

9. Գտնում է, որ խնդրո առարկա լուսաբանումները չեն խախտել լրատվության բազմակարծությունը, թեմատիկ կենտրոնացման արգելքը, չեն վնասել որևէ այլ իրավաչափ շահի և չեն ստեղծել որևէ անհամաչափ կամ ապօրինի առավելություն որևէ անձի համար, ընդհակառակը՝ գերակայել է հանրային իրազեկվածության ապահովման նպատակը, որը համահունչ է Օրենքի նպատակներին և լրատվության միջոցի գործառույթին:

10. Հասկանալի չէ նաև վարչական վարույթի հարուցման հիմքում Նարեկ Կարապետյանի քաղաքական գործունեության կամ կուսակցական պատկանելության շեշտադրումը, քանի որ նման շեշտադրումը տվյալ վարույթի առարկայից դուրս է և կարող է ստեղծել սխալ տպավորություն, թե խնդիրը վերաբերում է ոչ թե լրատվական նյութի թեմատիկ ծավալին, այլ կոնկրետ անձի քաղաքական կարգավիճակին: Մինչդեռ սույն վարույթի շրջանակներում իրավական գնահատման առարկան պետք է լինի բացառապես Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառելիությունը կոնկրետ փաստական հանգամանքների նկատմամբ:

Միաժամանակ, Հեռարձակողը խնդրել է վարույթի շրջանակում հաշվի առնել ներկայացված բացատրությունները և գնահատել վիճարկվող հաղորդումները դրանց բովանդակային, նպատակային և հանրային շահի համատեքստում:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազրկված ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմին՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Յուրաքանչյուր ոք ունի Հեռարձակողների միջոցով կարևոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունք՝ առանց նախապես անհատական թույլտվության:

2. Հեռարձակողները, որոնց ծրագրերում առկա են լրատվական բնույթի տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են լուսաբանել կարևոր իրադարձությունները:»:

Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել օրենքների կարգավորող դրույթները:

Այսպես, քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2021 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 299, գործողության ժամկետը՝ 21.01.2021թ-21.01.2028թ., սփռման տարածքը՝ ք. Երևան:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի 2026 թվականի փետրվարի 24-ի և 25-ի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը, ինչն հանդիսանում է Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթների պահանջի խախտում:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռարձակողի ներկայացված բացատրությունները, որի արդյունքում արձանագրում է հետևյալը.

1. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը: Տեսալսողական տեղեկատվության գրաքննությունն արգելվում է:

Հարկ է նշել, որ սույն վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովը՝ որպես անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, Օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների շրջանակում հայտնաբերել է Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի առերևույթ խախտման հատկանիշներ և դեռ չի կիրառել որևէ սահմանափակում, իսկ գրաքննության մասին ընդհանրապես տվյալ դեպքում խոսք չի կարող գնալ:

2. Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի սահմանափակումը վերաբերում է նույն թեմայի վերաբերյալ լուսաբանմանը, որը չպետք է գերազանցի Օրենքով սահմանված հաղորդման եթերաժամի 25 տոկոսը: Տվյալ դեպքում վարույթի առարկան «նույն թեման»՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակարգող, խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի հարցազրույցի լուսաբանումն ու *դրա հեռարձակման տևողությունն են*, որը գերազանցել է Օրենքով սահմանված՝ լրատվական հաղորդման եթերաժամի 25 տոկոսը, այլ ոչ թե հեռարձակված հաղորդման հյուրը՝ Նարեկ Կարապետյանը:

3. Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորման տրամաբանությունից բխում է, որ իրավախախտման գնահատման հիմքում դրվում է ոչ միայն հաղորդման բովանդակությունը՝ նույն թեման, այլև տվյալ դեպքում դրա յուրաքանչյուր առանձին հեռարձակման փաստը: Նույն թեմայի բազմակի հեռարձակման յուրաքանչյուր դեպքով ձևավորվում է առանձին փաստական կազմ, քանի որ յուրաքանչյուր հեռարձակում առանձին է ներգործում լսարանի վրա, առանձին է խախտում բազմակարծության և հավասարակշռված լուսաբանման պահանջը**,** և գնահատվում որպես ինքնուրույն իրավախախտման դեպք:

Ուստի Հեռարձակողի այն պնդումը, թե մշտադիտարկման արդյունքում արձանագրված 24.02.2026թ. 3 և 25.02.2026թ. 9 դեպքերը չեն կարող դիտարկվել որպես 12 առանձին իրավախախտումներ՝ պայմանավորված դրանց բովանդակային նույնականությամբ, անհիմն է:

4. Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված «նույն թեմայի վերաբերյալ լուսաբանում» ձևակերպումը նշանակում է, որ դրանում թեմատիկ բազմազանությունն ինքնին բավարար չէ բազմակարծության ապահովման համար, քանի որ Օրենքի նորմի կիրառման շրջանակում կարևոր նշանակություն ունի նաև մեկ անձի ընդհանուր ազդեցությունը հաղորդման թեմատիկ բովանդակության ձևավորման վրա: Մասնավորապես՝ հեռարձակումների ընթացքում հաղորդման հյուր Նարեկ Կարապետյանը նույն թեման՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության դիրքորոշումը ներկայացնում է տարբեր թեմաների (սոցիալական, տնտեսական, արտաքին քաղաքական և այլն) ներքո, ինչն արգելված չէ Օրենքով, սակայն դրա լուսաբանումը Հեռարձակողի լրատվական հաղորդման ընթացքում տևել է ընդհանուր եթերաժամանակի 25 տոկոսից ավել՝ խախտելով Օրենքով սահմանված պահանջը:

Միաժամանակ Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթների վերաբերյալ Հեռարձակողի մեկնաբանությունը նեղ սուբյեկտիվ է և չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի դրույթների պահանջին,

այն է՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից (...):

Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասում «նույն թեմայի վերաբերյալ լուսաբանում» ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նաև Օրենքն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով նաև *հոդվածի կարգավորման համատեքստից*, որի նպատակը տվյալ դեպքում տեղեկատվական դաշտում բազմակարծության ապահովումն է, որը չի ապահովվել լրատվական հաղորդման հեռարձակման ընթացքում «էականորեն տարբեր թեմաների» ձևական առկայությամբ:

5. Հայտնում ենք նաև, որ Արձանագրության և վարչական վարույթի հարուցման ծանուցման մեջ հստակ նշված է. «(...)*«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի լրատվական հաղորդումներում (24.02.2026թ.-ին՝ 3 լրատվական հաղորդում, 25.02.2026թ.-ին՝ 9 լրատվական հաղորդում) նույն թեմայի վերաբերյալ, մասնավորապես՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակարգող, խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի հարցազրույցի լուսաբանումը գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը»:*

Տվյալ դեպքում «նույն թեման» հենց «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակարգող, խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի հարցազրույցի լուսաբանումն է, քանի որ այն հանդիսանում է հաղորդման ընթացքում գերակշռող բովանդակային մաս, որի տևողությունը գերազանցում է օրենքով սահմանված 25 տոկոսի շեմը:

Օրենքի 42-րդ հոդվածի 9-րդ մասը պահանջում է արձանագրել գործի համար էական բոլոր հանգամանքները, ինչն էլ հենց իրականացրել է Հանձնաժողովը Արձանագրությամբ՝ արձանագրելով այն փաստը, որ հաղորդման շրջանակում մեկ աղբյուրի կողմից նույն թեմայի լուսաբանումը գերազանցել է օրենքով սահմանված շեմը:

6. Միաժամանակ տվյալ դեպքում խոսքը ոչ թե անձի խոսքի ազատության սահմանափակման մասին է, այլ Հեռարձակողի վրա դրված պարտավորության, որ նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումն իր լրատվական հաղորդման ընթացքում չպետք է գերակշռի:

7. Հայտնում ենք նաև, որ

- «*թեմատիկ կենտրոնացման արգելքի խախտում*» Հեռարձակողը թույլ է տվել, քանի որ նույն թեմայի շուրջ գերակշռող լուսաբանումն ինքնին հանգեցրել է մեդիա դաշտում անհամաչափ ներկայացվածության.

-«*որևէ այլ իրավաչափ շահի չվնասելու*» Հեռարձակողի պնդումը նույնպես հիմնավոր չէ, քանի որ Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջն ունի կանխարգելիչ բնույթ, իսկ «վնասի ապացուցման» իմպերատիվ պահանջ դրանում չկա:

-«*անհամաչափ առավելության հարցի» կապակցությամբ* Հանձնաժողովը գնահատել է նույն անձի և նրա դիրքորոշման գերակշռող ներկայացումը, որը նույնիսկ հանրային իրազեկման պատրվակով փաստացի ստեղծել է տեղեկատվական առավելություն՝ հակասելով բազմակարծության սկզբունքին.

-«*հանրային իրազեկվածության ապահովումը*» Հեռարձակողը պետք է իրականացներ Օրենքի պահանջների սահմաններում, ինչը տվյալ դեպքում չի արել:

8. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի պահանջներով, արձանագրել է, որ ««Ուժեղ Հայաստան» կուսակցության համակարգող, խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի հարցազրույցի լուսաբանման» տևողությունը գերազանցել է Օրենքով սահմանված 25 տոկոսը: Ուստի տվյալ հանգամանքի ընդգրկումը վարչական վարույթի նյութերում իրավաչափ է և անհրաժեշտ Օրենքի նորմի լիարժեք կիրառման, փաստական իրավիճակի ճիշտ գնահատման համար, և տվյալ վարույթի շրջանակում քաղաքական գործունեության կամ կուսակցական պատկանելության շեշտադրում առկա չէ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասը, 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ մասերը, Օրենքի 56-րդ հոդվածը և ղեկավարվելով Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

2026թ. ապրիլի 02
ք.Երևան